ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1952 Общественные науки

ՀԱՂՈՐԴԱՒՄՆԵՐ

ՆՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԴԵԿԱԲՐԻՍՏ ՄԻԽԱՅԻԼ ԻՎԱՆՈՎԻՉ ՊՈՒՇՉԻՆԻ ԵՎ 1827—1828 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մատենադարանի Արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանի արխիվում մենք հանդիպեցինք երկու վավերագրի, որոնք կապված են Սիբիրից Անդրկովկաս տեղափոխված դեկաբրիստ Միխայիլ Իվանովիչ Պուշչինի հետ։ Նա, ինչպես հայտնի է, ռուս հանճարեղ գրող Ա. Ս. Պուշկինի մտերիմ ընկերոջ՝ ականավոր դեկաբրիստ Ռ. Ի. Պուշչինի հարազատ եղբայրն է։

Առաջին վավերագիրը բժիշկ Մարտինենգոյի[1] 1827 թվականի հունիսի 9-ին Ներսես Աշտարակեցուն գրած ռուսերեն մի նամակն է, որի մեջ խընդրում է, որ եթե Մ. Ի. Պուշչինը ներկայանալու լինի իրեն և փոխադարձաբար գրամ խնդրի, ապա չմերժե։ Միևնույն ժամանակ խնդրում է, որ Մ. Ի. Պուշչինի վերցրած գումարի մասին տեղեկացնի իրեն, որպեսզի ինքը այդ գումարը վերադարձնի։

Երկրորդ վավերագիրը դարձյալ մի նամակ է, որը 1827 թվականի հունիսի 23-ին Թիֆլիսից Ներսիսյան դպրոցի տեսուչ՝ Հարություն Ալամդարյանը ուղարկել է Էջմիածին՝ Ներսես Աշտարակեցուն։ Նամակում խոսվում է այն մասին, որ բժիշկ Մարտինենգոն դիմել է իրեն և խնդրել, որ ինքը միջնորդի նրա առաջ՝ 1000 ռուբլի մի գումարով օգնելու Սիբիրի աքսորավայրից Թիֆլիս տեղափոխված դեկաբրիստ, գվարդիայի նախկին կապիտան, աստիճանազուրկ Մ. Ի. Պուշչինին՝ խոստանալով այդ գումարը վերադարձնել հետագայում։ Նշված նամակում Հ. Ալամդարյանը արծարծել է նաև 1827—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին հայկական կամավորական գունդ կազմակերպելու հարցը։ Հ. Ալամդարյանի հիշյալ նամակին կցված է Անդրկովկասի զինվորական նահանգապետ գեներալ Սիպյագինի Ալամդարյանին ուղղած ռուսերեն մի գրությունը այդ առթիվ։

Ալամդարյանը Մարտինենգոյին ուղղած նամակում գրում է.

«Այս հանճարեղ երիտասարդ՝ (խոսքը Մ. Ի. Պուշչինի մասին է Ա. Ա.)

---

[1] *Ն. Մարտինենգոն այդ թվականներին ապրել է Թիֆլիսում, նա մասնագիտությամբ եղել է բժիշկ։ սակայն միևնույն ժամանակ զբաղվել է մետաքսագործության և բամբակագործության զարգացման և տարածման գործով։ Անդրկովկասի իրականության մեջ, այդ կուլտուրաները ժամանակի առաջավոր տեխնիկայով մշակելու գործում, շատ կարևոր դեր է խաղացել նա։ Մարտինենգոն մոտ հարաբերության մեջ է գտնվել Ն. Աշտարակեցու և Հ. Ալամդարյանի հետ։ Մ. Ի. Պուշչինի և Մարտինենգոյի կապերի մասին ոչինչ ասել չենք կարող։ Նրանք, հավանաբար, ազգականներ կամ մոտ ընկերներ են եղել*

յառաջն կապիտան հեծելազօրուն Ղվարդիոյ, և ապա վասն յանցուածոց իրիք աքսորեալ և Սիբիր և այժմ յԵրևան հանդերձ կորուցմամբ աստիճանացն՝ արժանի համարի պարօն Մարտինենկօն կարեկցութեան իւրոյ և համենայն բարեկամաց իւրոց, վասն որոյ և աղաչէալ է զտէրութիւն Ձեր օգնել նմա ի կարիս իւր և ինքն յանձն առնու վճարել ի կողմանէ նորա մինչև ց 1000 ռուբլի ասիգնացիա»[1]։

Մ. Ի. Պուշկինը Սիբիրից Թիֆլիս է տեղափոխվել 1827 թվականին։

Մ. Ի. Պուշկինը Թիֆլիսում աշխատել է որպես Անդրկովկասի ռազմաճակատի ինժեներական զորամասի պետ և ակտիվ մասնակցություն է ունեցել 1827—1828 թվականների ռուս-պարսկական և 1828—1829 թվականների ռուս-թյուրքական պատերազմներին։ Նա եղել է Ռուսահայաստանի և Տաճկահայաստանի մի շարք վայրերում։ Այս մասին նա գրել է իր հիշողությունների մեջ[2]։

Հ. Ալամդարյանը և բժիշկ Մարտինենդոն իրենց հիշյալ նամակները, հավանաբար, ուղարկել են Աշտարակեցուն այն ժամանակ, երբ Պուշկինը գտնվել է Էջմիածնում կամ նրա մոտակա վայրերում, գուցե և այդ կապակցությամբ Պուշկինը եղել է Աշտարակեցու մոտ, բայց թե ինչ հետևանք է ունեցել՝ հաջողվել է ստանալ խնդրած գումարը, թե ոչ, չկարողացանք պարզել մեր ձեռքի տակ փաստեր չունենալու պատճառով։

Հայաստանում Մ. Ի. Պուշկինը իր տրամադրության տակ ունեցել է 150 բանվոր և մի շարք մասնագետներ, որոնց օգտագործել է Արաքս, Զանգու և այլ գետերի վրա կամուրջներ կառուցելու, ճանապարհաշինարարական և այլ աշխատանքներում օգտագործելու համար։ Իր հիշողություններում Պուշկինը նկարագրում է, թե ինչպես Աբաս-Միրզայի դեմ տեղի ունեցած կռիվների ժամանակ, Արաքս գետի մյուս ափը ռուսական զորքեր անցկացնելու համար, տեղի հայ բնակչությունից բազմաթիվ քանակությամբ տկեր են հավաքել, լցրել են օդով և դրանցով Արաքս գետի վրա կամուրջներ կառուցել։ Այդ կամուրջների վրայից անցել են ռուսական հետևակ զորամասերը, հարձակվել են Աբաս-Միրզայի զորքերի վրա և ջախջախել նրանց։

1827 թվականի հոկտեմբերի 1-ին Մ. Ի. Պուշկինը եղել է Երևանի բերդը պաշարող ռուսական զորամասում։ Նրա մասնագիտական շնորհքի և եռանդուն աշխատանքների շնորհիվ 1827 թ. հոկտեմբերի 1-ին պայթեցվել է Երևանի բերդը, որից հետո ռուսական զորքերը հաղթական մուտք են գործել Երևան։ Պարսիկները մեծ քանակությամբ դերի և ռազմավար թողնելով, փախել են դեպի Նախիջևան և Թավրիզ։ Ռուսական զորքերը հետապնդել են նրանց և գրավել Նախիջևանը, Թավրիզը և Պարսկաստանի այլ քաղաքները։ Մ. Ի. Պուշկինը պարսկական զորքերին հետապնդող, ճակատամարտ տվող և հաղթող ռուսական զորամասերի հետ է եղել Նախիջևանում, Թավրիզում և նոր գրաված վայրերում։

---

[1] Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատուն (Մատենադարան) Արխիվային բաժին, կաթ. դիվանի ֆոնդ, թղթ. № 55, վավ. № 197։

[2] Մ. Ի. Պուշկինի հիշողությունների այն մասը, որը վերաբերում է Անդրկովկասում իր եղած ժամանակաշրջանին, աչքի ընկնող դեկաբրիստ բարոն Անդրեյ Եվգինիևիչ Ռոզենը հրատարակել է „Русская старина“ ժուռնալի 1884 թվականի փետրվար ամսվա համարում „Декабристы на Кавказе“ խորագրով։

Պետք է հիշատակել, որ այդ պատերազմին, Մ. Ի. Պուշչինից բացի, ակտիվ մասնակցություն են ունեցել դեկաբրիստներ՝ Ա. Ս. Գրիբոեդովը, Ն. Ն. Ռաևսկին, Շիպովը, Վոլխովսկին, Ի. Գ. Բուրցևը և ուրիշները։

Պուշչինը, ինչպես նշել ենք, ակտիվ մասնակցություն է ունեցել 1828—1829 թվականների ռուս-թյուրքական պատերազմում ևս։ Նա մի շարք կամուրջներ է կառուցել Կարսի և Կուր գետերի վրա և շատ կարևոր դեր է կատարել Կարսի ամրությունները հետազոտելու, այդ մասին ռազմական կարևոր տեղեկություններ գերագույն հրամանատարությանը տալու և այդ ամրությունները թևանցելով գրավելու գործում։ Կարսը գրավելուց հետո նրան տեղափոխել են Ախալցխա, որտեղ այդ ժամանակ կատաղի կռիվներ էին տեղի ունենում Ախալցխայում ամրացած թյուրքական զորքերի և ռուսական հարձակվող զորքերի միջև։ Ախալցխայի կռիվների ընթացքում նա շատ ծանր վիրավորվում է։ Սկզբում նրան պառկեցրել են դաշտային հիվանդանոցում, իսկ Ախալցխան գրավելուց հետո, տեղափոխել են Ախալցխայի հիվանդանոցը, դնելով Պասկևիչի անձնական բժշկի հսկողության տակ։ Ախալցխան գրավելուց հետո, Պասկևիչը մեկնել է Թիֆլիս, քաղաքի ղեկավարությունը թողնելով Բեհբութովին, որի հետ, հավանաբար, անձամբ ծանոթ է եղել Մ. Ի. Պուշչինը։ Մի քանի ամիս Ախալցխայում բուժվելուց հետո, նրան տեղափոխել են Թիֆլիս՝ բուժումը շարունակելու։ 1829 թվականին նա կրկին գնացել է Կարս և անցել է իր պարտականությունների կատարմանը։ Այս անգամ Պասկևիչը մի նոր պարտականություն է տվել նրան՝ հետազոտել թշնամու ուժերը և առաջ շարժվող ռուսական զորամասերի համար տեղագրական քարտեզներ գծել։

1829 թվականին Կարսից մինչև Էրզրում առաջ շարժվող ռուսական կռվող բանակի հետ միասին, Պուշչինը կռվի մեջ է եղել թյուրքերի դեմ։ 1829 թվականին նա մասնակցել է Էրզրումի կամպանիային, որից հետո նրա առողջությունը վատացել է։

1829 թվականին Վլադիկավկազում Մ. Ի. Պուշչինը հանդիպել է ռուս հանճարեղ գրող Ա. Ս. Պուշկինին, որը վերադառնում էր Էրզրում կատարած իր հայտնի ճանապարհորդությունից։ Նրանք միասին գնացել են Եկատերինոդար (Կրասնոդար), իսկ այնտեղից՝ Կիսլավոդսկ։

Կիսլավոդսկում Մ. Ի. Պուշչինը հանդիպել է հայ զինվորական Լազարևին, որին ծանոթ է եղել դեռ Թիֆլիսում եղած ժամանակ։

Հետագայում Մ. Ի. Պուշչինը երկար տարիների ծառայությունների ընթացքում հասնում է գեներալի աստիճանի և մահանում 1869 թվականին։

Ինչպես տեսանք, Մ. Ի. Պուշչինը ծանոթություն և կապեր է ունեցել մի քանի հայերի հետ, սակայն այդ կապերի և հարաբերությունների մասին մենք առայժմ ոչինչ ասել չենք կարող՝ մեր ձեռքի տակ համապատասխան փաստեր չունենալու պատճառով։

Դեկաբրիստների ելույթը Ռուսաստանի առաջավոր ինտելիգենցիայի միտքը արթնացրեց, նա իր արձագանքները ունեցավ նաև Անդրկովկասի հեռու խորքերում։ Ինչպես պարզվել է, դեկաբրիստների հետ կապված են եղել վրաց ինտելիգենցիայից ոմանք։ Հավանական է, հայ ինտելիգենցիայից ևս եղել են մարդիկ, որոնք կապեր են ունեցել դեկաբրիստների հետ։ Ակնհայտ է, որ դեկաբրիստ Ա. Ս. Գրիբոեդովի հետ շատ մոտ հարաբերության մեջ է եղել Հ. Ալամդարյանը։ Վերոհիշյալ փաստաթղթից պարզ-

վում է, որ Հ. Ալամդարյանը, դեկաբրիստ Մ. Ի. Պուշչինին օգնելու համար, շատ համարձակ կերպով միջնորդել է Աշտարակեցու առաջ։

Նույն վավերագրում, ինչպես ասացինք, Ալամդարյանը Աշտարակեցուն գրել է 1827 թվականի ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին Հայկական կամավորական գնդի համար հայ զինվորներ հավաքագրելու առթիվ Կովկասի զինվորական նահանգապետի մի պաշտոնական գրության մասին։ Նա հայտնում է Ն. Աշտարակեցուն, որ նահանգապետը պահանջում է Հայկական գնդի համար զինվորներ հավաքագրել, սակայն իր ուժերից վեր համարելով այդ, դիմում է նրա կարգադրությանը և օգնությանը։ Այդ մասին նա գրում է.

«Վոյեննոյ կուբերնատոր քաղաքիս ի 11 ամսոյս թուղթ գրեաց առ իս վասն ժողովելոյ յորդորանօք հոգևորական ռանձին ուրուք՝ ի վիճակի մերում զյոժարակամ գունդ զինուորութեան, մանաւանդ ի նահանգէն Բորչալուի, և բերան առ բերան ևս թախանձեաց զիս յոյժ առ այս, բայց ես ինքնագլուխ չկամեցայ յանդգնել առ այսպիսի գործ ծանր, վասն որոյ և զօրինակ թղթոյ նորա ընդ սմին մատուցեալ Աստուածախնամ Հօրդ իմոյ սպասէմ հրամանի»[1]։

Հայ ժողովուրդը դարեր շարունակ հարստահարվել, հալածվել և ֆիզիկական ընաջնջման առաջ է կանգնած եղել պարսկական և թյուրքական նվաճող բռնակալների կողմից։ Չնայած այն բռնություններին, որ գործադրում էին նվաճողները ազատության և անկախության համար մաքառող ժողովուրդների նկատմամբ, բայց ազատասեր հայ ժողովուրդը երբեք չի դադարել իր անկախության համար պայքարելուց։ Եվ երբ սկսվեց 1827 թվականի ռուս-պարսկական պատերազմը, հայ ժողովուրդը միացավ Ռուսաստանին և նա իր լավագույն զավակներին ուղարկեց օգնելու ռուսական զորամասերին։ Հայ ժողովուրդը ոտքի կանգնեց՝ նյութական և բարոյական օգնություն ցույց տալու ռուսական բանակին, որի վրա նա նայում էր որպես իր ազատարարի։

Պարսկական արյունոտ լուծը Անդրկովկասի ժողովուրդների ուսից թոթափելու համար կազմակերպվեցին վրացական, ադրբեջանական և հայկական կամավորական գնդեր, որոնք ռուսական զորքերի հետ միասին կրվում էին պարսկական զորքերի դեմ։

Հայկական գնդի կազմակերպման նախաձեռնությունն իրենց վրա վերցրին Ներսես Աշտարակեցին և Հ. Ալամդարյանը։ 1827 թվականի մարտ ամսին Թիֆլիսում հավաքագրվեց 200 հայ կամավոր, որը հետագայում բավական մեծացավ։ 1827 թվականի մարտի 30-ին Թիֆլիսի հրապարակներից մեկում Ն. Աշտարակեցին հայկական կամավորական գնդի համար զորահանդես է կազմակերպում և ինքը հանդես գալիս ոգևորիչ մի ճառով։

Ն. Աշտարակեցին երբ ռուսական բանակին առաջնորդել է դեպի Ջալալօղլի (Ստեփանավան), հայոց կամավորական գնդի վերջնական կազմակերպումը թողնվել է գնդի կազմակերպման հանձնաժողովին, որի նախագահը Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ-ադյուտանտ Սիպյագինն էր, իսկ հանձնաժողովի անդամները՝ Հ. Ալամդարյանը և այլ անձինք։

[1] Նույն վավերագիրը։

1827 թվականի մայիսի 15-ին Թիֆլիսի հայկական եկեղեցիներից մեկի հրապարակում գեներալ Սիպյագինի և Հ. Ալամդարյանի ղեկավարությամբ կազմակերպվել է Հայկական կամավորական գնդի երկրորդ զորահանդեսը, որտեղ հայ կամավորները երդվել են՝ քաջաբար կռվել պարսկական արյունոտ լուծը հայ ժողովրդի ուսից թոթափելու համար։ Հանդեսին ոգեշնչող ճառ է ասել Հ. Ալամդարյանը[1]։

Իր ճառում նա կանգ է առել հայ ժողովրդի անցյալի, նրա կորցրած պետականության, օտարերկրյա նվաճողների լծի տակ ընկնելու պատմական փաստերի վրա և կոչ է արել հայ զինվորներին միանալ ռուս քաջարի զինվորներին՝ նրանց հետ միասին կռվել պարսկական լուծը տապալելու և Հայաստանը ազատելու համար։

«Դրոշակ այդ,—ասել է նա,—որ այսօր վերակարդալով զհաւոր անուն տեառն սրբազանս և տուաւ գնդի ձերոյ, է առհաւատչեայ սիրոյ Աստուծոյ և օծելոյ նորա առ ձեզ։ Պահեցէք զայս անգին աւանդ իբրև զբիր ական։ Հաւասիկ ամաչեսցեն և պատկառեսցեն ամենայն հակառակորդք ձեր և եղիցին իբրև զչեղեալս և կորիցեն ամենայն դատախազք ձերք»[2]։

Հայկական կամավորական գունդը այդ հանդեսին իր շարքերում ուներ 600 զինվոր, իսկ ռազմաճակատ մեկնելու նախօրյակին գունդը իր հրամկազմի հետ միասին արդեն 943 հոգու էր հասնում։ Հայկական կամավորական գունդը ռուս-պարսկական պատերազմում փառքով պսակեց իր անունը։ Նա անօրինակ քաջությամբ ռուս, վրացի և ադրբեջանցի զինվորների հետ միասին կռվեց Անդրկովկասը ազատագրելու գործի համար։ Արևելյան Հայաստանը պարսկական գաժան լծից ազատվեց, և այդ օրվանից հայ ժողովուրդը իր բախտը ընդմիշտ կապեց ռուս մեծ ժողովրդի բախտի հետ։ Հայ ժողովուրդը կանգնեց տնտեսական և կուլտուրական զարգացման նոր ուղու վրա։ Շնորհիվ ռուս մեծ ժողովրդի, հայ ժողովրդի արևելյան հատվածը փրկվեց ընաջնջումից և բարոյական կործանումից։

Շփվելով ռուս մեծ ժողովրդի հետ, նա ազդվեց առաջավոր դեմոկրատական գաղափարներից և նրա հետ միասին մասնակից դարձավ ռևոլուցիոն մեծ գաղափարների իրականացման գործին։

Նկատի ունենալով վերոհիշյալ վավերագրերի պատմական արժեքը, հանձնում ենք տպագրության։

ԱՎԵՏԻՔ ԱԴԱՄՅԱՆ

Ваше высокопреосвященство!

Лестно мне слышать было от многих, коих Ваше Высокопреосвященство удостоили своими письмами, о хорошем здоровии Вашем, дай Бог добы оно в таком же положении продолжалось на многие лета.

Пользуясь с приятного случая, при коем могу иметь честь приложить два письма, первое к Статскому Советнику Влангали, а пос-

---

[1] Հայկական կամավոր գնդի երկրորդ զորահանդեսին Հ. Ալամդարյանի արտասանած ամբողջ ճառը տպված է Ա. Երիցյանի «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայքը», մաս Ա., Թիֆլիս, 1894 թ., էջ 274։

[2] Ալամդարյանի հիշյալ ճառի հայերեն և ռուսերեն ձեռագիր օրինակները գտնվում են Մատենադարանի Ա. Երիցյանի արխիվում, թղթ. 159, վավ. 195։

леднее к Михаилу Ивановичу Пущину, осмеливаюсь всепокоренейше просить Вашего Высокопреосвященства, что ежели сей последний отнесется к Вам с требованием какой либо денежной помощи, чтобы Ваше Высокопреосвященство не отказывало ему оной, а о числе взятых им денег почли мне своим уведомлением, для вручения онных, кому Вам заблагоугодно будет приказать получить таковых от меня.

С истинным почтением и совершенною преданностью честь имею пребывать.

Вашего Высокопреосвященства всенижайший слуга

Е. Мартыненго

Тифлис 9 июня
1827 года

При сем честь имею донести, что начиная от Патриарха и других особ, все находятся в добром здоровии равно как и Г. Чербет, слава богу начинает ходить и в скором времени надеяться можно о совершенном его здоровии.

Гос. хранилище древних рукописей (Матенадаран) при Совете Министров Арм. ССР. Архивный отдел, фонд диван католикоса, папка № 55, док. № 92.

Սեպտեմբեր 6 ստացայ[1]

Աստուածարեալ քահանայապետ
բազմերախտ ծնող իմ եվ տէր

Յետ քառասնօրեայ բազմագիմի մտատանջութեանց և ակնկալութեանց՝ արժանի եղէ շնորհաձիր հրամանագրոյ Ձերոյ Աստուածագութ որրրազնութեան գրելոյ ի մայիսի 30 և ի յունիսի 11։ Այսօքիկ թուղթք հանգոյն շուշփայի տեսլեանն Յովհաննու փարատեցին զխաւար տրտմութիւն յաջաց իմոց և ի սրտէ և զօրացուցին զլքեալ ձեռս իմ և զկթուցեալ ծունկըս իմ ի գործս պաշտօնի իմոյ։

Դոքտոր Մարտինենկո՝ երախտաւոր բարեկամն տան մերոյ ի յունիսի 9 խնդրեալ է տէրութենէ Ձերմէ գումարաւ իւիք դրամոց նպաստամատոյց լինել Միխայլ Իվանովիչ Պուշչինի՝ որդւոյ վից Ադմիրալի Պետրոպօլսոյ։ Զայս հանճարեղ երիտասարդ՝ յառաջն կապիտան Հեծելազօրուն Ղվարդիոյ, և ապա վասն յանցուածոց իրիք աքսորեալ ի Սիբիր և այժմ յԵրևան հանդերձ կորուցմամբ աստիճանացն՝ արժանի համարի Պարօն Մարտինենկոն կարեկցութեան իւրոյ և ամենայն բարեկամաց իւրոց, վասն որոյ և աղաչեալ է զՏէրութիւն Ձեր օգնել նմա ի կարիս իւր և ինքն յանձն առնու վճարել ի կողմանէ նորա մինչև 1000 ռուբլի առիգնացի։ Ստատսկոյ Սովետնիկ Պարոն Վլանդալի՝ գլխաւոր թարգմանն կառավարութեանս յելանելն ի քաղաքէս փոխ առեալ է ի բժշկապէտէս մերմէ 150 ռուբլի արծաթ

[1] *Գրութեան վրա մակագրել է Ն. Աշտարակեցին։ Ա. Ա.։*

գրամ և դարձեալ վասն ծառայի իւրոյ 20 ռուբլի, և տուեալ է սմա զձեռագիր վասն ստանալոյ զ170 ռուբլի արծաթ դրամս յարքունի գանձարանէ ի վճար պարտուցն. բայց գանձարանն չետ նմա զայն գումար. վասն որոյ և բարձր բարեձննդութիւն սորա գրեաց առ նոյն ստատսկոյ Սովետնիկ Վլանդալին զյիշեալ 170 ռուբլիսն հասուցանել Տէրութեան Ձերում անպատճառ, և առ Միխայլ Իվանովիչ Պուշչինն գրեաց ստանալ ի Տէրութենէ Ձերմէ և կամ ի ծանօթէ ումեմնէ մինչև ց1000 ռուբլի ասիգնացի դրամս, և ի հասանելն ի քաղաքս ձեռագրոյ Պուշչինի վասն ստանալոյ զդրամսն՝ խոստանայ ինքն առ օրին վճարել զի թղթին նշանակեալ գումարն...

Վոյեննոյ Կուբերնատոր քաղաքիս ի 11 ամսոյս թուղթ գրեաց առ իս վասն ժողովելոյ յորդորանօք հոգևորական անձին ուրուք՝ ի վիճակի մերում զյոժարակամ դունդ զինուորութեան, մանաւանդ ի նահանգէն Իորչալուի, և բերան առ բերան ևս թախանձեաց զիս յոյժ առ այս, բայց ես ինքնագլուխ չկամեցայ յանդգնել առ այսպիսի գործ ծանր վասն որոյ և զօրինակ թղթոյ նորա ցանդ սմին մատուցեալ Աստուածախնամ Հօրդ իմոյ՝ սպասեմ Հրամանի...[1]

Յանձն արարեալ զիս և զամենայն գործառնութիւնս իմ Աստուածահաճոյ աղօթից և օրհնութեան Ձերոյ Գերաստիճանեալ Քահանայապետութեան՝ մնամ միշտ լիասիրտ և լիաբերան գոհութեամբ Աստուածընտիր Տ՝ահանայապետ Քաղցրագութ ծնողութեան Ձերոյ ամենախոնարհ ծառայ

Յարութիւն աւագ քահանայ Ալամդարեանց[2]

ի 23 յունիսի 1827 թ.
Տփխիս

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատուն (Մատենադարան), Արխիվային բաժին կաթ. դիվանի ֆոնդ, թղթ. № 55, վավ. № 197.

Копия

Преподобный отец протойерей Артемий

Милостивый Государь мои.

Препровождая у сего несколько экземпляров воззвания к Армянам, в коем приглашаются они ко вступлению в ополчение, я покорнейше прошу Вас сделать сие воззвание известным пастве вашей

---

1 Անհատական բնույթի պարբերությունները հանված են — Ա. Ա.։

2 Պրոֆ. Վ. Պարսամյանը «Դրական թերթ»-ի 1951 թվականի 48 համարում հրապարակել է «Դեկաբրիստները Հայաստանում» վերնագրով մի հոդված, ուր նա Հ. Ալամդարյանի հիշյալ նամակից բերել է մի հատված՝ աշխարհաբար թարգմանությամբ։

Կարևոր ենք համարում նշել, որ վերջերս Մատենադարանի Արխիվում հայտնաբերել ենք Հ. Ալամդարյանի երկու նամակը ևս (կաթ. դիվան թղթապանակ № 55, վավերագիր № 201, 1827 թ. և վավ. № 207, 1828 թ.) ուր նա Ն. Աշտարակեցուն նորից խնդրում է, որ չմերժի իր դիմումը՝ դեկաբրիստ Մ. Ի. Պուշչինին դրամական փոխառություն տալու։ Ա. Ա.

и надеюсь, что вы по испытанному усердию вашему к правительству и постигая пользу соотчичей ваших, примите нужные меры к поселению в них той похвальной ревности к службе, какою они себя уже ознаменовали.

С истинным почтением честь имею быть Ваш, Милостивый Государь мой,

покорный слуга *Николай Сипягин*

№ 2913
11-го июня 1827 года
Гор. Тифлис.

Хранилище древних рукописей (Матенадаран) Армянской ССР. Архивный отдел, фонд диван католикоса, папка № 55, документ 197.

Новые документы о декабристе Михаиле Ивановиче Пущине и об организации армянского добровольческого полка во время русско-персидской войны в 1827—1828 гг.

Резюме

В отделе архива Матенадарана нам стали известны два документа, которые связаны с декабристом М. И. Пущиным, пересланные из Сибири в Закавказье.

Первый документ—это письмо доктора Мартыненго Нерсесу Аштаракецы от 9-го июня 1827 года. В этом письме он просит, что если Михаил Иванович Пущин обратится к нему с просьбой дать ему деньги, чтобы он не отказал удовлетворить его просьбу.

Второй документ—письмо, которое 23-го июня 1827 году написал из Тифлиса инспектор и преподаватель русского языка школы имени Нерсесяна Арутюн Аламдарян по адресу: Эчмиадзин, Нерсесу Аштаракецы. В этом письме Аламдарян пишет, что доктор Мартыненго обращался к нему и просил, чтобы Аламдарян ходатайствовал перед Н. Аштаракецы, дабы последний оказал М. И. Пущину денежную помощь в сумме 1000 руб. В вышеуказанном письме, кроме этого, Аламдарян, затронул вопрос об организации армянского добровольческого полка накануне русско-персидской войны в 1827—1828 гг.

М. И. Пущин, как известно, из Сибири в Тифлис переведен в 1827 году. Он здесь работал в качестве начальника Закавказской военно-инженерной части и активно участвовал в русско-персидской войне в 1827—1828 гг. и в русско-турецкой войне в 1828—1829 гг.

Он был в некоторых местах Западной и Восточной Армении, о чем в своих воспоминаниях пишет.

М. И. Пущин играл важную роль в деле обследования и завоевания крепостей Еревана, Карса и др. Он же построил ряд сооруженных с военной целью мостов на реках Аракс, Кура, Зангу и проч.

Во время русско-персидской войны были организованы армянский, грузинский и азербайджанский добровольческие полки с целью оказать помощь русским войскам. Добровольческий армянский полк организовали Нерсес Аштаракецы и Арутюн Аламдарян; этот полк воевал вместе с русским, грузинским и азербайджанским войсками против персидской армии.

Ввиду того, что вышеуказанный документ имеет историческое значение, сдаем его к печати.

Аветик Адамян